

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԿԻ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուրլի. կես տարվանը 6 բուրլ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Ստորագրութիւնը բաց է առաւօտեան 10—5 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

Ոսկի և Հայրապետ Աւետիսեանները, Սօֆիա և Գրիգոր Գրիգորի Փանիկեանները ցա-
ւօք սրտի յայտնելով իրանց անսովորաբար հօր և աներոջ

ՄԿՐՏԻՉ ՄԱՐԳԱՐԵԱՆ ՓԱՆԻԿԵԱՆՅԻ

մահը, որ տեղի է ունեցել Վերին Ագուլիսում դեկտեմբերի 25-ին, խնդրում են ազգա-
կաններին ու բարեկամներին շնորհ բերել հոգեհանգստին, որ կատարվելու է կիրակի,
առաջ 9-ին Մոսկովսկոյ Գերբի կիկեցում ժամի 11¹/₂ ինչ:

Երկար ու ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանվեց ժողովրդական պատաւոր
քաղաքացի

ՆԻԿՈԼԱՅ ԱՐՏԵՄԻԵՎԻՉ ԲԱՅՍՈՂՈԼՈՎ

Այդ մասին յայտնում են թանգազին կորուստի առիթով վշտացած հանգուցեալի քոյ-
րերը և փեսաները—Թամար Արտեմիևնա և Միխայիլ Նիկոլայիւի Սահակեանները,
այդի Նիկոլայի Արտեմիևնա Արտեմիևնա Քակուկովնա, Նատալիա Արտեմիևնա և Ալեքսանդր Իսա-
հակովիչ Կուրգեմբեկեանները և եղբոր աղջիկը Մարիա Սոլովյովնա և Արտակ Սոլովյով-
նա Միքայելեանները. Յուզարկաւորութիւնը հանգուցեալի բնակարանից—(Օրբիւհան
փողոց, Հեռագրական տուպիկ № 19), յունվարի 9-ին առաւօտեան ժամը 10-ին Նո-
րաշէնի ս. Աստուածածին եկեղեցում, թաղուրը Սոլովյովների գերեզմանատանը:

Աննա Իվանովնա և Տիգրան Համբարձումեան Էնֆիանդիսները խորին վշտով
յայտնում են

ՍՈՖԻԱ ՍՈԼՈՄՈՆՈՎՆԱ ՉԻԹԱԽԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ յունվարի 6-ին առաւօտեան: Յուզարկաւորութիւնը կիրակի,
յունվարի 9-ին, առաւօտեան ժամը 10-ին հանգուցեալի բնակարանից (Սէրգիեվսկայա
փող. № 10), դէպի Վանքի մայր եկեղեցին. թաղուրը Սոլովյովների գերեզմանատանը:

Մարիա Սոլովյովնա Աստուրեանը և Նիկոլայի Սոլովյովնա Հէլլոբեանը խո-
րին վշտով յայտնում են իրանց անսովորաբար քրոջ

ՍՈՖԻԱ ՍՈԼՈՄՈՆՈՎՆԱ ՉԻԹԱԽԵԱՆԻ

մահը: Յուզարկաւորութիւնը տեղի կունենայ կիրակի, յունվարի 9-ին, առաւօտեան
ժամը 10-ին հանգուցեալի բնակարանից, Սէրգիեվսկի փողոց № 10, դէպի Վանքի
մայր եկեղեցին, այնտեղից էլ դէպի Սոլովյովների գերեզմանատանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ստորագրութիւնը բաց է առաւօտեան 10—5 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

ՍՏՐԱԿՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մեր բաժանորդները մի մեծ թիւ ու-
ղարկել է իր հասցէները յունվարի 1-ից
յետոյ: Մենք աշխատում ենք ամեն կերպ
արագացնել հասցէները ապագութիւնը.
Թէև տօները խանգարում են մեր ցան-
կութեան շուտափոխ իրադրութեանը:
Մի քանի հասցէներ մեր ձեռքը ուշ
են հասնում պատասխան հարցազնու-
թեան թերութիւններով պատճառով: Օ. Ի-
նակ հիւսիսային պատը ուշանում է Կով-
կասեան լեռներում եկած ձիւների պատ-
ճառով: Մեր երկրի խոլ տեղերից պատը
չէ գալիս ամեն օր, այլ շաբաթը երեք,
երկու, իսկ երբեմն նոյն իսկ միայն մէկ
անգամ: Մի քանի հասցէներ ուշ են հա-
սել և այն պատճառով, որ նրանց ու-
ղարկողները փոխանակ անմիջապէս խո-
րագութեան դիմելու, ուղարկել են ու-
րիշ անձերի մեզ յանձնելու համար:
Ստորագրութիւնը իր կողմից ջանք գործ
կը դնէ կարելիին չափ շուտով ուղարկել
լրագիրը ստացած հասցէներով:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Քաղաքական աշխարհը բացի ուսու-
սողական պատերազմից գրադրված է մի
քանի խնդիրներով, որոնք ունեն կարևո-
րութիւն: Ֆրանսիական կառավարութեան
միջնորդական կազմի փոխելը, Հուլի-
դէպի ընտրութիւնը, չինական չէզոքու-
թեան մասին հարցադրութեանը, Թիւր-
քիայում ծագած խռովութիւնները և մի

քանի ուրիշ խնդիրներ գրաւում են քա-
ղաքական տեսլիկայի առանձին ուղարկութիւնը,
որովհետև նրանք կարող են մեծ թէ փոքր
չափով ազդել միջազգային յարաբերու-
թիւնների վրա: Մենք այսօր մի քանի
խոսք կատարեց չինական չէզոքութեան
մասին:

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողին,
չինական չէզոքութեան հարցը մի քանի
անգամ ասպարէզ է եկել վերջին տար-
վայ ընթացքում և նորից անհետացել:
Ներկայումս դարձեալ մենք հանդիպում
ենք մի շարք յայտարարութիւնների այդ
չէզոքութեան խախտման նշաններով մա-
սին: Եւրօպական պետութիւնները մի
քանի անգամ պաշտօնապէս յայտնել են,
որ նրանք չեն ցանկանայ աւելի բար-
դացնել քաղաքական հորիզոնի վրա իշ-
խող դրութիւնը, ուստի և ամեն ջանք
պէտք է գործ դնեն, որ Չինաստանի մէջ
խռովութիւններ չը ծագեն և չը բռնկվի
հակաեւրօպական շարժում չինական ժո-
ղովրդի և զօրքի մէջ:

Եւ մինչև այժմ աջողվել է պահպանել
այդ չէզոքութիւնը, թէև մասնաւոր խախ-
տումներ տեղի են ունեցել նրա դէմ:
Չինաստանը ինքը չէզոքութեան կուսա-
կից է և խուսափում է ամեն մի վտան-
գաւոր առիթից, որ կարող կը լինէր
փաստել նրա բուն գործութեան: Բայց չէ-
զոքութիւնը պահպանելու համար էլ ան-
հրաժեշտ է որոշ ոյժ և հեղինակութիւն:
Չինաստանը, թոյլ լինելով, չէ կարողա-
նում լսել տալ իր ձայնը և հեղինակութիւն
պաշտպանել իր դիրքը: Եւ եթէ մինչև
այժմ պահպանված է այդ չէզոքութիւնը,
մասամբ դա արդիւնք է այն հանգաման-
քի, որ Չինաստանին այդ բանում աջակ-
ցել են միւս պետութիւնները:

Ոչ ոքի համար գաղափար չէ, որ չինա-
կան տարրը չափազանց շահագրգռված է
այն բոլոր անցքերով, որոնք տեղի ու-
նեն իրանց սահմանների մօտ, բայց ի-

րանք չինացիները ներկայումս հեղինա-
կութիւն չունեն կարգադրելու գործերը
իրանց ցանկութեան համեմատ: Եւ պէտք
է կարծել, որ Չինաստանը կը պահպանէ
չէզոքութիւնը անխախտ կերպով ա-
ռաջիկայում, ինչպէս այդ կարողացաւ
նա պահպանել անցեալ տարի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Երեկոյթ Թիֆլիսի ազնուականութեան դպրոցի օգտին.
—«Թիֆլիսի կուրս» հայկական բեմի վրա.—Մարիա
դը Բէլինայի կօնցերը.—Երեկոյթներ Նուխում և
Վաղդիկապուտ:

Յունվարի 6-ին Թիֆլիսի հրուստիւն տե-
ղի ունեցաւ մի շքեղ երեկոյթ, որի արդիւնքը
նշանակված էր Թիֆլիսի ազնուականութեան
դպրոցի օգտին:

Երեկոյթը կազմված էր կօնցերային և դրա-
մատիկական բաժիններից: Կօնցերային, բացի
սիրողներից, մասնակցում էր և ներկայումս Թիֆ-
լիսում գտնվող երգչուհի Պապայան: Սիրող-
ները արին այն, ինչ որ նրանք կարող էին և
արժանացան շնորհակալական ծափահարու-
թիւնների: Պապայան երգեց վեց կտոր և ա-
ռաջ բերեց հրճուանք և բուն ծափահարու-
թիւններ: Յիշենք նրանցից «Րօմէօ և Ջուլիետ-
տա» օպերայից վերջածագ վալսը, Բուրնիշտեյ-
նի «Գիշերը», «Травушка», որոնց կատարու-
մը պատճառեց գեղարուեստական մեծ զուար-
ճութիւն:

Երեկոյթին ներկայ էին կովկասեան կառա-
վարչապետի պաշտօնակատար գեներալ Մա-
լադա, Թիֆլիսի նահանգապետը, վրաց ազ-
նուականութեան քաղաքական ներկայացուցիչ-
ները, Թիֆլիսի հասարակութեան աչքի ընկ-
նող մասը և օտարազգի հիւրեր: Երեկոյթի
կառավարչութիւն էր իշխանուհի Մ. Ջամբա-
կուրեան—Օրբէլեանի:

II
Հայ դրամատիկական ընկերութեան խումբը,
ուրաթ, յունվարի 7-ին, ներկայացրեց Զու-
գրեմանի «Թիֆլիսի կուրս» կօնցերային չորս
գործերով:

Զուգրեմանի այդ հեղինակութիւնը իր բո-
վանդակութեամբ հայ հասարակութեան համար
առանձին գրաւչութիւն չէ ներկայացնում, ո-
րովհետև նրա հերոսները զեռ ներկայացուցիչ-
ներ չունեն մեր ընտանեկան և հասարակական
կեանքում: Բայց պիտի մէջ կան հետաքրքրա-
կան տիպեր և տեսարաններ, կան հոգեբանա-
կան գծեր, որոնք հնարաւորութիւն են տալիս
դրամատիկական ներկայացնելու բնաւորու-
թիւններ և նրանց շփոթներն ու ընդհարում-
ները միմեանց հետ:

Պիեսի գլխաւոր հերոսուհին մանկահասակ
մի աղջիկ է, Բօզի, որի դերը կատարում էր
դերասանուհի Օ. Արամեան: Մենք երկրորդ
անգամ ենք տեսնում դերասանուհուն բեմի
վրա: Ընդհանուր տպաւորութիւնը, որ թողեց
նրա խաղը, շատ նպաստաւոր էր: Արամեան
ուսումնասիրել էր ներկայացված տիպը և ապ-
րում էր բեմի վրա հերոսուհու կեանքով: Նա
ազատ շարժումներ ունի, խօսում է մաքուր
հայերէն լեզուով և աշխատում է բնական ձև
առ իր խաղին: Մենք անբաւարար գտնեք
դերասանուհու գրեմը: Բօզիի դէմքը պէտք էր
աւելի մանկական դուրս բերել, քան ներկա-
յացված էր: Արամեան պէտք է ուղարկութիւն
դարձնէ արտասանութեան վրա: Նրա նախա-
դասութիւնների առաջին մասը լաւ է լսվում,
իսկ երկրորդը շատ ցածր և թոյլ, կարծես
ուսումնական է: Երրորդ գործողութեան մէջ Բօզի
շաժապանի խմելու և դիտողութիւններ անելու
տեսարանը կարօտ է աւելի ճոխ և մանրա-
մասն հոգեբանական արտայայտութեան: Արա-
մեան գրաւեց հանդիսականների ուղարկու-
թիւնը, ստացաւ ծաղիկայ մեծ կողով և վար-
ձատրվեց բուն ծափահարութիւններով:

Բօզիի աւագ քրոջը՝ Էլզայի և Լաուրայի
դերերը կատարում էին տիկիններ Միլիբեան

և Զարիֆեան: Միլիբեան խօսակցութեան
և շարժումների ժամանակ ցոյց է տալիս կեն-
դանութիւն և բաւարար է իր դերում, իսկ լուս-
թեան և ուրիշների խաղի ժամանակ չափազանց
անաւարտ է: Տիկ. Զարիֆեանի դերը շատ փոքր
էր, ուստի նրա մասին մեր կարծիքը կը յետա-
ձգենք: Տիկին Վա. դուհին՝ Բօզիի մօր դերում
վատ չէր:

Պիեսի երկրորդ գլխաւոր անձնաւորութիւնը
ծերունի Վինկլիման էր, որի դերը կատա-
րում էր Արէլեան: Գրեմը բնորոշ էր և ար-
տայալիչ. ընդհանուր դիրքը տիպիկական:
Այնպէս, ինչպէս որ Արէլեան էր բնորոշ
Վինկլիմանի տիպը, դա մի լաւ ուսումնասիր-
ված ամբողջութիւն էր: Սակայն մենք համա-
ձայն չենք Վինկլիմանի բնաւորութեան այն
բնորոշութեանը, որ Արէլեանը տալիս է մեզ:
Արէլեանը ներկայացնում է Վինկլիմանին իբրեւ
մի շատ բարի ծերունու, որ երբեմնապէս ցոյց
է տալիս դիւրաբար բնորոշութիւն և սիրում է յա-
ճախ պառնակական մթմթեցող յայտնել: Մեր
կարծիքով՝ Վինկլիմանի բնաւորութեան մէջ
շատ ուժեղ է եսասիրական, նոյն իսկ չարու-
թեան գիծը, որի շնորհիւ նրա ամբողջ ընտա-
նեկան կեանքում տեղի են ունեցել շատ խո-
շոր դժբաղդութիւններ: Նա հիթէ աւելի բարի
է դարձել, այդ միայն ծանր հարուածներից և
ծերութեան ամայութեան զգացմունքից յե-
տոյ: Վինկլիմանից վախճանում և դուրս գալու
բոլորը և չին կարող չը վախճանալ, որովհետև
նա սարսափ է եղել բոլորի համար. նա ընկճ-
վել գիտէ միայն աւելի մեծ ոյժի, անհրաժեշ-
տութեան կամ աներկայի շահերի առաջ:
Արէլեան լաւ կարողանում է խօսել պառնա-
կան ոճով և ձայնով: Նա արժանացաւ բուն
ծափահարութիւնների:

Դերասան Օհանեան, որ կատարում էր Կէս-
լերի դերը, խաղում է ազատ, ունի լաւ առո-
գանութիւն, արտասանում է բարձր, որոշակի,
բայց այդ արտասանութիւնը աւելի յիշեցնում
է կուլպանների, քան դերի արտասանութիւն:
Կէսլերը պէտք է աւելի նուր, աւելի կոկ և
ճկուն անձնաւորութիւն զուրա բերվել, քան
այն, որ ներկայացնում է Օհանեան: Նրա Կէս-
լերը յիշեցնում է Կովկասեան բօնվիվանի:

Մամիկոնեան բնորոշ Կօսինսկի էր: Նրա
մշտական ժպիտը, նրա հաճոյախօսական բնա-
ւորութիւնը արտայայտված էր ամենայն բա-
ւարարութեամբ: Ռադունի իր փոքրիկ դերում
լաւ էր:

Զարիֆեան նոր դերասանական ոյժ է Թիֆ-
լիսի բեմի վրա: Նա բարեխիղճ դերասան է
երևում: Նա ձեռք չէ բերել այն ճկունութիւնը,
որ պահանջվում է հոգեբանական բաղադրեալ
արտայայտութիւնների համար, բայց մի լաւ
յատկութիւն է ցոյց տալիս, այն, որ շարժու-
նական ձևերից փորձում է անցնել տիպերի
ուսումնասիրութեան շահիդը: Նրա ներկայաց-
րած Մալաք բաւարար Մալա չէր, բայց ան-
կասկած կրում էր մշակութեան և գիտակցա-
կան վերաբերմունքի գրօյլ իր վրա:

Թատրոնը լիք է չէր:

Հետեւեալ ներկայացումը տեղի կունենայ
վաղը, երկուշաբթի, յունվարի 10-ին: Կը ներ-
կայացվի Տիմկովսկու «Պաշտպան» դրաման:

Սիրող

III
Այսօր, կիրակի, երեկոյան ժամը 8¹/₂ ին,
Թիֆլիսի արտիստական ընկերութեան կօն-
ցերտային դահլիճում կը կայանայ յայտնի օ-
պերային երգչուհի (դրամատիկական սօ գրանս),
Բրիտանիկ արքայական թատրոնի արտիս-
տուհի Մարի դը Բելինայի կօնցերը, մաս-
նակցութեամբ շուրջապատ օրիորդ Նինա
Ադրամովայի, որ բնիկ Թիֆլիսուհի է, աւար-
տել է ուսումը Թիֆլիսի I իգական գիմնա-
զիայում և Եւրօպական կրթութիւնը ստացել
Մօսկվայի կօնցերվատորիայում ու աշակերտել
պրօֆէսոր Գրիգորովիչին: Կօնցերտի ծրագիրը
հետաքրքրական է:

IV

Յունվարի 3-ին, Նուխի քաղաքում տ. Զա-
ւահիր Ասրիեանցի տանը, տիկնոջ ջանքերով

և սիրողները մասնակցութեամբ կայացաւ Տօնածառի մի շքեղ հանդէս, ուր կարգացվեցին նաև ոտանաւորներ, երգեր և տեղի ունեցան հայկական պարեր: Ժողովով էին բաւականին հիւրեր, այնպէս որ դահլիճը ծայրէ ի ծայր լիքն է: «Հայկական պարերը» մեծ ազդեցութիւն գործեցին հանդիսականները վրա: Յատկապէս աչքի էին ընկնում իրանց դերերում օր. Անունցեան, որ արտասանեց «Մարտիկ զգեստ», օր. Ա. Սամուէլեանց արտասանեց «Մի րօպէ» և արժանացան բոլոր ծափահարութեան: Իսկ երգերից մեծ տպաւորութիւն թողեց ներկայ հողողները վրա «Ով դու բարեկամ», «Հօյ նազան», «Դու Արագիլ»: Հասարակութիւնը գոհ սրտով հեռացաւ հետաքրքրական և զուարճալի երեկոյթից:

Մ

Վարդիկավազում, դեկտեմբերի 27-ին վաճառականական ակումբում կայացաւ հայկական երեկոյթ եկեղեցական ծխական ուսումնարանի օգտին, Երեկոյթը կազմված էր ձուխ ծխազրով. առաջին և երկրորդ երաժշտական մասում երգեց երկսեռ խումբը հայկական հազուատներով ժողովրդական երգեր. «Գարուն», կապուտակ, դարբա լացէք և այլն... Ղեկավարութեամբ Ս. Դեմիրճեանի Շատ աշող էին բոլոր խմբական երգերը և ներդաշնակ: Զուգարի վրա նուագեց կօզակ զինուորների կապիւլմայտի օգնական էնգելմիդ և դաշնակցում էր հայ ուսանող պ. Կիրիւսեան, որոնք արժանացան բոլոր ծափահարութիւնները: Յետոյ սաացին ոտանաւորներ ուսուստարան Սեմինով և ուսու դերասանուհի Բառէր երգեց ցիգանական երգեր, որը ևս արժանացաւ բոլոր ծափահարութեան և ստացաւ թարմ ծաղիկայ փունջ: Բայց ամենից սիրունը և դուրեկանը ֆրանսիացի երիտասարդ պ. Ա. Փ. Կաշէն էր, որ երգեց «Le Credo du paysan» և հայերէն՝ «Ձայն տուր ով ծովակ» ու «Արի իմ սոխակ» երգերը: Երգիչը մի քանի անգամ ընծ հրաւիրվեց և բոլոր ծափահարութեան արժանացաւ: Ընդհանրապէս երաժշտական մասը շատ լաւ անցաւ: Յետոյ տեղի ունեցան պարեր հայկական, առիական և եւրօպական: Պարերի ժամանակ և սկսվեց «շուրա» (քաղաք)–դահլիճի մի անկիւնում շքեղ քիօսկում ծաղիկների փնջիկներ, շամպայն, թէյ և քաղցրեղէն թխուածքներ և գործուածքներ ծախում էին օրերորդներ, տիկիկներ, երիտասարդներ: Երեկոյթի կառավարչուհին էր տիկին Նինա Կիրակոսեանը, իսկ օգնականը հայոց ուսումնարանի հոգաբարձու պ. Տէր-Արքայան: Որոնց շնորհիւ առաջին անգամ է տեսվում Վարդիկավազում այսպիսի մի հայկական երեկոյթ: Հասարակութիւնը գոհ սրտով հեռացաւ երեկոյթից. բացի հայ հասարակութիւնից կային և օտար ազգերից, որոնք եկել էին պատելու հայկական երեկոյթը: Ընդհանուր մտաւրը հազարից աւելի է:

Օր. Ե. Բաղդասարեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մարման, դեկտեմբերի 25-ին

Թոյլ տուէր «Մշակի» միջոցով շնորհակալութիւնս յայտնել Բոստօնի մարտիկ պ. Ս. Յովհաննիսյանին և Աւետեանին այն բանի համար, որ այլ տարի և նախորդ երկու տարիները պէս նուիրել են իրանց գիւղի զբոսը իւրաքանչիւրը 300 ալ իւրաքանչիւրը 600 բոլորով:

Մաւրայի դպրոցի աւագ ուսուցիչ՝ Արշակ Աճաջեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՍԻ

Վեհափառ կաթողիկոսի կողմից մի յատուկ պատգամաւորութիւն ուղարկվեց մի քանի օր սրանից առաջ դէպի Պետերբուրգ ներկայանալու ներքին գործերի մինիստրին: Պատգամաւորութեան մասնակցում են Ներսէս արքեպ. Սուրբապետեան և Միսրոպ Սէր-Մովսիսեան:

Բազուի լրագրիւնները հաղորդում են, որ Կովկասի կառավարչապետի օգնական և ժամանակաւոր պաշտօնակատար գեներալ-լէյտէնանտ Ե. Դ. Մաւրայի Բազու եղած ժամանակ նրան ներկայացել են երկու պատգամաւորութիւններ—մէկը հայ հոգեւորականութեան կողմից՝ Անանիա եպիսկոպոսը և միւսը նախադիւնաբերողները կողմից—Պ. Յ. Ղաւկասեանը, Ար. Ֆելքլը, կառավարիչ Դաստակեանը և ուրիշները:

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է 1¹/₂ թերթից:

Ստացանք աղբատներին բաժանելու համար Առաքել Առաքելեանից 1 բուլբի և մի անձից, որը չէ ցանկանում անունը յայտնել, 1 բուլբի:

Բազուի լրագրիւնները հաղորդում են, որ ներքին գործերի մինիստրը թոյլատրել է կրկին բաց անել Բազուի հայոց Մարգարիտական ընկերութեան գրադարանը, որ փակված էր Կովկասի նախկին կառավարչապետ իշխան Գօլցիկի հրամանով:

Բարձրագոյն յանձնարարութիւնով Կովկաս եկած կոմս Շուվալովը՝ խօսքայի դէմ տեղի վրա կուսկու համար, անցեալ օրը եկաւ Երեւանից Թիֆլիս և նոյն օրը և եթ մեկնեց դէպի Բազու:

Շուշուց եկել է մի պատգամաւորութիւն, տեղական ազգայնականութեան ընդհանուր հասարակական վճիռով, ներկայանալու երկրի կառավարչապետի օգնական և ժամանակաւոր պաշտօնակատար գեներալ-լէյտէնանտ Մաւրային, խնդրելու տեղական մի քանի շատ կարեւոր պէտքերի համար: Պատգամաւորութեան անդամներն են բժիշկ Երամիշեան, ինժեներ Յակ. Սաչատրեան, Ա. Մէլիք-Աղաբեան, Գ. Քալանթարեան, Մ. Գոլուխանեան և Յովհ. Սաչատրեան:

Զբաւորների օգտին մեր խմբագրութեան մէջ ստացված գումարները բաժանվեցին կարօտեալներին թաթախման օրը, չորեքշաբթի, յունվարի 5-ին: Տուած օգնութիւնը թէյ և չէր կարող խոշոր լինել, այնուամենայնիւ շատ խեղճերի միջթարութիւն պատճառեց ներկայ տօներին, տալով նրանց ձեռքը մի փոքր նշան:

Յունվարի 6-ին սովորական հանդէսով կատարվեց Թիֆլիսում խաչը շուրջ գցելու հանդէսը: Թուաները վերջացին ծխականատրութիւնը սովորականից աւելի վաղ, ժամը 11¹/₂-ին, իսկ Վանքի մայր եկեղեցուց հայկական թափօրը մեկնեց հազիւ 12¹/₂-ին: Սաչը շուրջ գցելու պէս Կուրի երկու ամբիւրջ լողացողներն ընկան շուրջ: Սաչը շրջի հանց Զ. Ա. Մուսայէլեան, որը Վեհափառ կաթողիսին յանձնել էր 500 բ. աղբատներին տալու համար: Ժողովրդի ահագին բազմութիւն կար հանդէսին, բայց ոչնչով կարգ ու կանոնը չը խանգարվեց: Ոստիկանութիւնն այնքան էլ աչքի չէր ընկնում իր բազմութիւնով, ինչպէս անցեալ տարի:

Թիֆլիսի քաղաքային վարչութեան կարգադ.ութեամբ մի յատուկ յանձնաժողով, բաղկացած սանիտարական վերատեսուչ բժիշկ Կ. Ստեփանեանից, քաղաքային քիմիկոս պ. Ալեքեանից, ախտահան բժիշկ Ա. Ե. Բազմատից և քաղաքային տնտիկ պ. Չախմախապեանից—պէտք է ասել 8-ին, նորից ընկեր Կուր գետի աջ բազուի և միջոցներ մտածէր նրա մարքութեան համար: Այս արդէն մի քանի անգամ եղաւ, որ ուղարկվան նշանակում է ընտրութիւն... յոյս կայ, որ մի տասը տարի ձգձգվի «միջոցներ ձեռք առնելու» հարցը:

Անցեալ օրը հեռագիրը լուր բերեց, որ Մօսկվայի նախկին գլխաւոր ոստիկանապետ Տրեպօվի դէմ սպանութեան փորձ է եղել: Այժմ Մօսկվայի լրագրիւնները հաղորդում են մանրամասնութիւններ: Յունվարի 2-ի երեկոյեան ժամը 1¹/₂ ին, ասում է «Ք. Շ.», Նիկոլաե-վսկի կայարանում, գնացքը Պետերբուրգ մեկ ներուց առաջ, Մօսկվայի նախկին գլխաւոր ոստիկանապետ Դ. Ֆ. Տրեպօվը քիչ մնաց զոհ գնար մի անյայտ անձի սպանութեան փորձին: Երբ Տրեպօվը ման էր գալիս պատֆօր-մի վրա, նրան մօտեցաւ մի երիտասարդ, հագած ուսանողական զգեստներ, և 3 անգամ ատրճանակ արձակեց նրա վրա: Գնդակները չը կպան Տրեպօվին, իսկ երիտասարդը ձերբակալվեց:

Յունվարի 6-ին Բաթումում, ցերեկվայ ժամը 1-ին սպանութեան փորձ է արված Մանթաշի գործարանների կառավարիչ Պօզո-հանի դէմ: Յարձակվողները ատրճանակ են արձակում, երբ Պօզոհանը մօտենում է իր սենեակի լուսամուտին: Գնդակը չէ կպել կառավարչին, այլ՝ ծակելով լուսամուտի փեղկը,

թողվել է առատադի տախտակում: Բնու-թիւն և կատարվում: (Խ. Օ.):

Ներկայումս Թիֆլիսի քաղաքային վարչութեան ընդունարանում կախված են քաղաքի այն երիտասարդների ցուցակները, որոնք ներկայ 1905 թ.ին պիտի ենթարկվեն վիճակահանութեան, այնպէս որ իւրաքանչիւրը կարող է նրանով ցուցակում առաջացած սխալները ուղղել: Այն երիտասարդները, որոնք վախճանվել են, նրանց ծնողները պարտաւոր են յայտնել դրա մասին զինուորական ատեանին:

Թիֆլիսի մեղանների վարչութեան համար լրագրիւնների ընտրութիւնը, որ նշանակված էր ամսի 8-ին, յետաձգվում է մի առ ժամանակ և պիտի կատարվի մեղանների աւագ պ. Մ. Դանդուբեանի նախագահութեամբ:

Պետերբուրգից հեռագրում են «Խ. Օ.» լրագրին, որ արդարադատութեան մինիստրութիւնը կարծիք է յայտնել, թէ ինքը գտնում է ժամանակակից կամ պատշաճ Կովկասում ներմուծելու երգուեալ գատաւորների հաստատութիւնը:

Լօնդոնից «Рyссь» լրագրին հեռագրում են հետեւեալը. «Նիւ-Եօրկ հասան ժամ 100 ուսու շտուգիւստներ, որոնք գտնում են Կալիֆօրնիա, ուր նրանք մտադրութիւն ունեն գաղթավայր հիմնել: Ասում են, որ դա նրանց տեղեկութիւններ հաւաքող խումբն է: Եթէ նրանք կեանքի պայմանները նպաստաւոր կը գտնեն, այն ժամանակ Կալիֆօրնիա կը գան էլի 200 հազար շտուգիւստներ գաղթավայր հիմնելու համար:

Մայրաքաղաքի լրագրիւններում լուրեր երեւացին, որ լեւնային ինստիտուտի դիրեկտոր Կոնովալովը հրաժարվում է իր պաշտօնից կաւուր կերպով: «Наша Дня» լրագրիւրը հաղորդում է, որ այդ լուրը բոլորովին անհիմն է և պ. Կոնովալովը ոչ մի ցանկութիւն չէ արտայայտում կամաւոր կերպով թողնելու իր պաշտօնը:

Մինսկից հաղորդում են «Наша Дня» լրագրին. «Այստեղ դեկտեմբերի 27-ին Մինսկի նահանգական դատարանի երդուեալ-հաւատարմատարները ընդհանուր ժողովում որոշվեց Պետերբուրգի իրաւաբանների ուղարկել հետեւեալ հեռագրով. «Վրդոված պաշտպանների և քաղաքացիական պահանջատերերի անձի և արժանաւորութեան դէմ գործ գրված բռնութիւնով Գոմէլի ղառավարութեան ժամանակ և դիտելով այդ իրը պաշտպանների դէմ գործադրվող կոպիտ բռնութեան և փաստաբանների անկախութեան խախտման բազմաթիւ փաստերից մէկը, Մինսկի երդուեալ-հաւատարմատարները յայտնում են իրանց համակրանքը երդուեալ-հաւատարմատար Սօկոլովին և նրան պաշտպանող ընկերներին, խորապէս զայրանալով, որ գտնվել են այն պիտի երդուեալ-հաւատարմատարներ, որոնք հնարաւոր են համարել շարունակել մի և նոյն գործը այդպիսի արտակարգ հանգամանքներում: Այդ միջնադէպը նկատելով իր լուրջ վատագ պաշտպանութեան իր սրբադան պարտականութիւնները կատարելու գործում, Մինսկի իրաւաբանները խնդրում են խորհրդին առաջարկել Ռուսաստանի բոլոր իրաւաբաններին միահամուռ ուժով միջոցներ մտածելու պաշտպանելու իր իրաւունքները, իր պատիւն ու արժանաւորութիւնը»:

ԳԱՆՁԱԿԻՑ մեկ գրում են. «Ամսի 3-ին Գանձակում պաշտօնապէս բացվեց տեղական փոխադարձ վարչի ընկերութիւնը, որն այդպիսով սկսեց իր գործունէութիւնը: Ընկերութեան գրաւադրուիւր հասնում է արդէն մի քանի տասնեակ հազար բուլբու. յոյս կայ, որ գնալով կաճի նա շնորհիւ նոր անդամների ու խելացի դրամական գործողութիւնների: Անդամների թիւը հարիւրից անցնում է. նոր անդամներ, ի հարկէ, կը գտնվեն. անդամավճար սկսվում է 25 բուլբուց: Ընկերութեան մասնակցում են տեղացի թէ հայեր և թէ թուրքեր. համերաշխութիւն նրանց մէջ նկատվում է: Ցանկալի է որ ընկերութիւնը գրաւէ նաև գաւառի գիւղացիներին ու այդպիսով ընդարձակէ իր դերը: Ընկերութեան կառավարիչ է ընտրված պ. Ս. Բալաբեանը, իսկ վարչութեան անդամներ պ. պ. Ն. Ն. Մէլիքեան, Մ. Մալեանց և Մուսատայի: Յիս կայ, որ այդ անձինք եռանդով կը գործեն ու աշխուրթեամբ առաջ կը

տանեն իրանց ստանձնած պատասխանատու գործը:

Զանգեզուրի գաւառի, սիւնաց վիճակի ՄԱԶՐԱ գիւղից մեկ գրում են. «Երեկոյեաների 20-ին մեր Մազրա գիւղից 4 վերստ հեռաւորութեամբ Արիւրուի սարում սաստիկ փոթորկի ձիւնի տակ մնացին տաս հայեր, 7 ձի, որոնցից ազատվեցին միայն չորս մարդ և չորս ձի, իսկ մնացած վեց մարդը և երեք ձի գոհ գնացին կատաղի փոթորիկին: Նոյն օրը Զանգեզուրի գաւառի թիւրքաբնակ Սիսեան գիւղի թուրքերից հարիւրաչափ լաւ զինված թիւրքեր կատաղի յարձակում գործեցին մեր հաւան խեղճ Ալիու գիւղի ոչխարի հօտերի վրա. հովիւները հազու կարողացել են ազատել իրանց կեանքը: Իսկ յիշեալ Սիսեան գիւղի թիւրքերը, օգտվելով հանգամանքից, որ հայերը բոլորովին անզէն են, խլում են խեղճ անզէն հայերից մօտաւորապէս հազար հարիւր եօթնասուն գլուխ ոչխար»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ս. ՂԱԶԱՐԻ ՎՏԱՆԳԸ

Վեհափառ, յունվարի 7-ին

Ս. Ղազար մեծիկ վտանգ մը անցուց հրգին. քիչ մնասով ազատեցաւ: Կրակի երեւան եկաւ չորեքշաբթի, յունուար 4, կէսօրէն ժամ մը առաջ, և երկու ժամ տեկեց: Ահա մանրամասնութիւնը: Այս ձեռք, վանքը շարժուն վառարաններով տաքցնելու դրութիւնը ջնջուելով, «բալոն-ֆէռ» հաստատուեցաւ: Աղէտը սակէ պիտի ծագէր, գործաւորներու տգիտութեանը պատճառաւ: Կրակարանին և վերեւի առատադին միջև ըստ բաւական ապահովութիւն չէր հաստատուած:

Չորեքշաբթի ժամը 11-ին իտալացի գրաշար տղայ մը բոց մը կը նշմարէ քաղաքի ֆէրին կրակարանին վրա գտնուած առատադին մէջ. անմիջապէս լուր կուտայ միւս «տպարանցիներուն», այսինքն՝ գրաշարներուն: Գուժը անմիջապէս կը տարածուի վանքին մէջ. անմիջապէս բոլոր վարդապետները, գերլուխ ունենալով Արքայապար, կը նետուին վտանգին կենտրոնը, որ տպարանին կից սենեակ մըն էր, և վրայի յարկը շատ ժամ Արքայաբաններին Դժբաղդաբար քահանայներուն մեծ մասը «Ինֆուէնցայէն» բռնըված անկողինն էին. ոտքը վրա գտնուող Ասկան կողմէ շուր կը հասցնեն ամաններով: Մեծ գործ տեսան իտալացի գրաշարները, որոնք մեծ եռանդով և փութաշնուութեամբ կարող եղան ջրհանկիւրներու գործը իրենք տեսնել: Մինչ մէկ կողմէ շուր կը հոսեցնէին, միւս կողմէն բանդուհներ կը կատարուէին: Վանքէն արդէն քաղաքը թիւեֆօն ըրած էին, և կէս ժամուան մէջ ջրհանկիւրները իրենց ջրը հաններով կը հասնէին նաւակով մը և երկու շոգեռաւակով. բայց տեսնելով մեծ գործ մը շունցան, տպարանցիներուն քաջ բազուկները փրկած էին Ս. Ղազարը: Թաղապետական պաշտօնատունը անընդհատ թիւեֆօն կը զարնէր վայրկեանէ վայրկեան տեղեկութիւն ուղղով, և միանգամայն առաջարկելով դեռ աւելի ջրհաններ խրկել: Թաղապետութիւնը չափազանցօրէն հոգ կը տանի վանքին Պաշտօնապէս ճարտարագետ մը ևս խրկուելով, յետ մանրագնին ընտրութեանց, կապաւորվէ թէ ու է վտանգ չը կայ այլ ևս: Երկու ջրհանկիւր կը մնան ու և դէպքի համար:

Այս կրակին պատճառն է քաղաքի ֆէրի ծըխանին մերձաւորութիւնը գերանի մը, որ օրերէ ի վեր արդէն անուր զարձած է եղել, և չորեքշաբթի օրուան տաքին չը դիմանալով կը բռնկի: Եթէ կրակը հասած ըլլար ձեղունը, առջը շատ դժուարաւ պիտի առնուէր:

Այս վտանգին լուրը քաղքին մէջ շատ յուզում պատճառած է. ու Վեհափառի պատրիարքը միւս օրը խնդակցութեան այցելութիւն տուաւ վանքը:

Ինչ և է, քաղաւորութիւն մըն է, որ կրակը ցորեկը տեսն կը պատահի և կը տեսնուի: Եթէ հրդեհը գիշեր ժամանակ ծագէր, վանքը կիսովին կը փռանար, տպարանը մէջը ըլլալով: Այժմ մնասը երկու հազար ֆրանկ է, և ան ալ ապահովագրութեամբ գտցուած:

Այս երկրորդ վտանգն է, որ կանցնէ Ս. Ղազար. քան և մէկ տարի առաջ ալ տեղի ունեցաւ հրգին մը, որ հիմակուանէն այլապէս սպանալից էր, և վանքին շատ մեծ մնաս մը պատճառեց:

